

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### Գործիսի պետական համալսարանի գրադարանային խորհրդի

1. ԳՊՀ գրադարանային խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) ԳՊՀ ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԳՊՀ ռեկտորի հրամանով:
2. Խորհրդի նպատակներն ու խնդիրներն են՝
  - ա/ աջակցել ԳՊՀ գրադարանի ռազմավարական, տեխնիկական զարգացմանը և դրանից բխող տարբեր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
  - բ/ քննարկել ԳՊՀ գրադարանի գործունեության տարեկան ծրագրերն ու դրանց կատարման մասին գրադարանի տնօրենի հաշվետվությունները,
  - գ/ ապահովել գրադարանի և համալսարանի հիմնական ուսումնական և գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունը,
  - դ/ հատուկ ուշադրություն դարձնել միջգրադարանային և միջազգային համագործակցության ծրագրերի պատշաճ կատարմանն ու արդյունքների հրապարակայնացմանը:
3. Խորհրդի նախագահը ԳՊՀ ռեկտորն է: Խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի քարտուղար:
4. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ԳՊՀ ռեկտորի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ:
5. Խորհրդի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորը, գիտական քարտուղարը, գրադարանի տնօրենը, ուսումնական վարչության պետը, գլխավոր հաշվապահը, համագործակցության ծրագրերի ներկայացուցիչներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ (ֆակուլտետների խորհուրդների կողմից առաջադրված), ուսանողության ներկայացուցիչներ:
6. Խորհրդի կազմը հաստատվում է ԳՊՀ ռեկտորի կողմից՝ երկու տարի ժամկետով (ըստ ոլորտների՝ ֆակուլտետների և ուսանողական խորհուրդների կողմից ներկայացված անձանց կազմից):
7. Խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Խորհրդի նիստերն արձանագրվում են, արձանագրության վարումը կազմակերպում է գիտական քարտուղարը:
8. Ռեկտորի հրավերով խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող մասնագետներ: